սայլերով պաշարներ տեղափոխելու դները, և այն։ Ուրեմն քաղաքային վարչութեան պարտականները վերցնում են, օրինակ, ինտենդանտութիւնից մի կապալ այս կամ այն պաշարեղէնը դիցուք Նշրևան հասցնելու, յետոյ իրանք էլ նշանակում են սայլերով յիշեալ պաշարեղէնը տեղափոխելու իրանց համար ձեռնտու գները...

Ուրեմն, իսկապէս մեր ինտելիգենցիան ընդունում է հասարակական պաշտօնները ոչ թէ հասարակութեանը ծառայելու համար, այլ գլխաւորապէս հասարակութեան աչքի ընկնող դիրքից օգուտ քաղելու համար, գրպանները լցնելու, հարստանալու նպատակով...

Եւ մենք դեռ յանդգնութիւն ունենք պնդել որ ընդունակ, պատրաստ և հասունացած ենք քաղաքային ինքնավարութեան համար...

Ոչ մի տեղ անճնուիրութիւն, բայց ամեն տեղ շահասիրութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱՅ Վ. ԱՂԱՔՇԱՊՏԻՑ

12 ապրիլի

«Մշակի» № 53 մէջ վաղարշապատից տպված էր մի լուր, թէ «ժողովրդից մի քանի հնգապատ մարդիկ սկսել են խռովութիւններ յարուցանել նոր կարգված երեք հոգաբարձուների և հայասիաման պ. Եղիազարեանի դէմ, որոնց յանձնված էր Լէմմինձի վանքից ստացած 25 խալվար (750 պուդ) ցորենից հաց պատրաստել ապ. աղքատ ժողովրդին էման գնով ծախելու համար, — և յիշեալ խռովարարների նպատակն է խանգարել այդ բարի գործը։

Թէ ովքեր են յիշեալ երեք բարեխիղճ հոգաբարձուները, նրանց մասին ոչինչ ասել չեմ կարող, որովհետև ոչ անուններ գրված են և ոչ էլ այս տեսակ հոգաբարձութիւն վաղարշապատում գոյութիւն ունի։ Բայց ինչ որ վերաբերում է պ. Եղիազարեանին, նա մի յայտնի անձնուրոյթիւն է վաղարշապատում, որովհետև տեղային հարուստներից մէկն է համարվում։ Այդ պարոնը այն տեսակ վարպետներից է, որ ՝ենրք ունի ամեն հանգամանքներից օգուտ քաղել,—երբեմն առաջնորդ է, երբեմն կապալառու է, երբեմն փունջի է, մի խօսքով, ամեն բան է, երբ չեն կայ, երբ կարելի է օգուտ քաղել։

Ներկայ տարվայ հացի թանգութիւնը բաց առրից պ. Եղիազարեանի առջև մի ընդարձակ ասպարէզ։ Նա Լէմմինձից կապալով վարձեց բոլոր փուռները, և փոխանակ բոլորի, բաց արեց մէկը միայն և այսպէսով իր ձեռքը ձգեց հացի մենաշնորհութիւնը։ Եւ որպէս զի իր դէմ մրցութիւն անող չը լինի, նա ամբաստեց խափանել բոլոր հիմնարկութիւնները, որ կարող էին վնասել իր շահերին։ Երբ ապացոյց, եւ կը յիշեմ մի քանի փաստեր միայն։

Ներկայ տարվայ յունվարի 25-ին, երբ հացի թանգութիւնը դեռ նոր էր սկսում զգալի լինել, վաղարշապատի հասարակութիւնը գիշերվան դաշտապանում մի ժողով կազմից և ընտրեց 12 անձնիք, որոնք պ. Արշակ Ս. Ցոմխփեանցի նախագահութեամբ պիտի կազմէին մի մանանաժողով, որի գործը պէտք է լիներ ամեն հնարներ բանեցնել թանգութեան առաջը առնելու, և ժողովրդի աղքատ դասին էման գնով հաց մատակարարելու, իսկ չքաւորներին ձրի տալու։ Մանանաժողովը պէտք է ունենար իր առանձին փուռը, պէտք է թիֆլիսից ալիւր բերել տար, պէտք է վարձից ցորեան փոխ առնէր, պէտք է ուրիշ շատ բաներ անէր, որոնք, ի հարկէ, հակառակ էին պ. Եղիազարեանի շահերին, որ բոլոր փուռները կապալով ունէր վեր առած։ Պարոնը իր կուսակիցների հետ ամբոխից եղած ընտրութիւնը խափանել, յիմար ինչ են թողել, որ մենք կարողանանք մի բան պատնիշել։ Ամբոխին այդ քրդերը, եթէ նրանք չը լինէին, ես ասբան ապառիկներ չէի անելնա։ Միայ որ պատերազմը սկսվի, քրդերը բոլորովին կը կատաղեն...։

—Այնը խօ էշ է, բայց ջորին աւելի դէշ է», պատասխանեց էֆէնդին իր սովորական ձևով,— քրդերը ջորու նման շատ են, որովհետև անհարազատ են։

Ջորիների հոմանանութիւնը քրդերի հետ, ոչ միայն էֆէնդու, այլ առհասարակ հայերի կարծիքով, այն նշանակութիւնն ունի, որ քրդերը ամբոխ։ Նշանակութիւնն ունի, որ քրդերը ամբոխ։ Նշանակութիւնն ունի, որ ջորու նման անհարազատ և խառնածին են։ Անհարազատների վարքի մասին միշտ վատ համարում ունի մեր ժողովուրդը։ Բայց ինչ որ հշմարիտ է, այն է, որ քրդերը խառնվելով հայերի հետ, թէև մի կողմից կորցրին իրանց ազգային բուն տիպը, բայց միւս կողմից ստեղծեցին մի նոր և ուրիշ ցեղ։ Դարերով ընտրելով հայոց պառանիների և աղջիկների ամենագեղեցիկները և վայելչանասակները (քուրդը բարձրահասակ կին չատ է սիրում) նրանք գեղեցկացրին իրանց ցեղը։ Որի ընդհանրացան, հայերը կորցնելով իրանց միջից ընտիր մասը, հետզհետէ, ոգեղացան, հետզհետէ այլանդակվեցան։ Ով որ լաւ հետազոտել է Թուրքաց Հայաստանի քրդերի և հայերի ընդհանուր գծերը, նրանց մէջ մեծ նմանութիւն կը գտնէ, որովհետև քրդերը ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ հայերից առաջ եկած մի նոր ցեղ։

Գիշերից բաւական անցել էր արդէն։ Զուլօն, հեռու նստած էր փուռնդ մանուկի մօտ, տխրութեամբ էր լսում հիւրերի խօսակցութիւնը, որ նրա համար խիստ ձանձրալի էր։ Նա անհամբերութեամբ սպասում էր, որ նրանք վերջացնեն, վերկենան քեռն, որպէս զի թէքը կարողանայ գնալ Ասատայի և Սուսիսանիի մօտ տեսնելու, թէ ինչ զրուցեան մէջ են նրանք։

Բայց էֆէնդին դեռ ևս չնեղու նպատակ չունէր։ Նա ամբոխի հետ բաւական խօսելիքներ ունէր, միայն տիրացու Սիմոնի ներկայութիւնը արգելք էր լինում։ Այս պատճառով անհարկեց Նա, թէ ցանկանում է քեռի, որովհետև առաջատեան չուտ պիտի վերկենայ, և կարող զրոյցներ ունենք։ Տիրացուն բարի գիշեր մաղթելով, հեռացաւ։ Նրա գնալուց յետոյ տերտէրը ասաց.

—Լաւը վարդապետից աւել գիտէ թշուառականը, ափսոս, մի քիչ խանչուտ հետ սէր ունի, տեսանք, ինչպէս լաւ կարդաց իմ ապառիկների հաշիւը։

—Տիրացու Սիմոնի համար էլ ասում, հարցրեց էֆէնդին, —այդ, չատ լաւ կարդաց։

Բայց էֆէնդուն չէին հետաքրքրում ոչ տիրացու Սիմոնը և ոչ էլ նրա ունեցած բարձր գիտութիւնը։ Նա ասիթ էր որոնում խօսելու մի առարկայի մասին, որի համար յատկապէս այս գիշեր եկել էր տերտէրի տունը։

Այդ միջոցին քահանան կանգնաց հանել կիսամաշ վերարկուն, որովհետև մասամբ խմելուց և մասամբ տան տաքութիւնից բաւական չաք էր ըլդգում։ Անզգուշութիւնից վերարկուի թեքը պատռվեցաւ։ էֆէնդին ասաց նրան.

—Ցէր հայր, վերարկուդ չատ է հնացել, ինչու մի նորը չես կարել տալիս։

—Օրհնած, ինչով կարել տամ, դուք խօ տեսաք իմ ապառիկները։—Այդ վերարկուն էլ լուսնոգի կարապետ էֆէնդուն էր, նա մեռաւ, ինձ տուեցին որպէս պոգոդուտ։ Եօթն տարի է, որ հագնում եմ։ Նրանից յետոյ, իմ մեղքից, հարուստներից ոչ ոք չի մեռել, որ վերարկու նորոգէի...

—Ես քեզ համար մի լաւը կարել կը տամ, դուք լաւ քահանայ էք, ասաց էֆէնդին,—հագէք և միշտ օրհնեցէք ինձ։

—Երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետաց օրհնութիւնը թող ձեզ վրա լինի, որդի, ասաց քահանան և սկսեց ոպանպանիչ կարդալ։

—Բայց մի ուրիշ խնդիրք էլ ունեմ, էֆէնդի, աւելացրեց նա,—դուք որ կաք, մեր թաղն ու պարծանքն էք. մենք ուրախանում ենք և ամեն օր փառք ենք տալիս Աստծուն, որ հայերից էլ ձեզ նման ազատներ կան, որոնք մուդիրի, դայմագամի և փաչայի մօտ համարձակ նիստուկաց ունեն և ամեն բան կարող են խօսել։ Ի սէր ազգի և ի սէր մեր ուրբ հաւատի աղաչում եմ ձեզ, մի թողէք տանուտէր Խաչօին և նրա ընտանիքը անօրէնների ձեռքում, դուք որ կամենաք, կարող էք նրանց ազատել, խեղճ են, նա քրիստոնեայ են, օգնեցէք նրանց։ Ինչ էլ որ լինի նրանց յանցանքը, մենք պարտաւոր ենք ծածկել, նրա համար որ, մեր մեջ և մեր արիւնից են։ Ես էլ չեմ հաճում նրանց գործածը, բայց «ով իցէ, որ ոչ մեղուցէ»...

Քահանայի խօսքերը, թէև մի առանձին տպաւորութիւն չունեցան էֆէնդու սրտի վրա, բայց նրան պատճառ տուեցին յայտնելու այն, ինչ որ վաղուց ասիթ էր որոնում ասել տերտէրին։

Էֆէնդին պատասխանեց, թէ ինքը պատրաստ է և կարող է ազատել տանուտէրի ընտանիքը հասած դժբախտութիւնից, և չի թողնի, որ նրա զբէխից մի մազ անգամ պակսի, եթէ տանուտէրը իր կողմից կը կատարէ էֆէնդու խնդիրքը։ Եւ յիշեցնելով քահանային նրա մի տարի առաջ հաղորդած գաղտնիքը Լայայի մասին, էֆէնդին ասաց, որ սրտօրից սիրում է այդ աղջկան, և կը ցանկանար, որ նա իր կինը լինէր։ Եթէ տանուտէրը կը կատարէ այդ ցանկութիւնը, էֆէնդին պատրաստ էր օգնել նրան։ Բայց հակառակ դէպքում, նա տարված էր թշմ տալ, որ իշխանութիւնը վարվէ օրէնքի և արդարութեան համեմատ, որ անառակայս կը վերջանար տանուտէրի ամբողջ ընտանիքի բնաջինջ լինելով և նրա հարստութեան յարձակելով։ Եւ յիշելով, քահանայի, որպէս հասարակաց հոր պարտաւորութիւնները, էֆէնդին խնդրեց տերտէրից, որ նա յանձն առնէ դիմել Յիրմնի Խաչօին և նրա հետ խօսել այդ մասին, քանի որ դեռ ուշ չէր, քանի որ դեռ կարելի էր գործը ուղղել և գալոց չարիքների առաջը առնել։

—Կարգա թող վկայ լինի, ասաց տերտէրը մի առանձին ուրախութեամբ,—ես էգուց առաւոտեան կը գնամ տանուտէրի մօտ և բոլորը կարգի կը դնեմ, որպէս ձեր կամքն է։ Խաչօն պէտք է փառք տայ Աստծուն և մի քանի մեռածներ թող կարէ սրբերին, երբ ձեզ նման մարդը ցանկանում է նրա փեսայ լինել։

Էֆէնդու դէմքի վրա երևաց մի խորամանկ մը պիտ, և կատակի ձևով պատասխանեց.

—Երբ կը կատարէք այդ բոլորը, այն ժամանակ ձեր հին վերարկուն կը նորոգվի...

—Իսկ իմ ապառիկները...

—Այդ մասին անհոգ կացէք...

(Կը շարունակվի)